ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ

Տևողությունը՝ 180 րոպե

XI դասարան

1.Միսաք Մեծարենցի գիշերերգությունը: («Համբույրիդ գիշե՜ր, պատուհանս է բաց…», «Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին..»): Շրջասույթներ Մեծարենցի մասին (առնվազն՝ երեք):

5 մ

2. Լևոն Շանթի խորհրդապաշտությունը: Հին ու նոր աստվածների հակամարտությունը «Հին աստվածներ» դրամայում: Սիրո հաղթական «պարտությունը» դրամայում (Վանահայր, Իշխանուհի, Աբեղա) :

5 մ

3.Ինչպե՞ս են արտահայտվում« դավաճան գործի ամոթը» և զղջումը «Թմկաբերդի առումը» պոեմում: Գրի՜ր համապատասխան հատվածը: Մեկնաբանի՜ր Թմկա տիրուհու կերպարը: Ո՞ր օպերան է գրվել այդ պոեմի հիման վրա, ինչպե՞ս է ստացել այդ անվանումը, ո՞վ է օպերայի հեղինակը:

5 մ

4. Ավետիք Իսահակյանի սերը: Վերլուծել երկու բանաստեղծություն (ընտրությունը մասնակցինն է): Չարենցը՝ Իսահակյանին:

5 մ

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան